**Արձանագրություն N 2**
**ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ-18/13 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստի**

ք.Երևան

26 հուլիս 2018թ.
ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Դ. Դաբաղյան |
| Հանձնաժողովի բացող անդամներ՝ | Ս. Մկրտչյան |
| | Ս. Շահմուրադյան |
| Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ | Ա. Հակոբյան |
| | Հ. Ղազազյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Հ. Նավասարդյան |

**1. Հանձնաժողովի նիստի օրակարգը**
**(Դ. Դաբաղյան)**

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին,
2. ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ-18/13 ծածկագրով հայտերի բացման մասին,
3. Գնման ընթացակարգի հայտեր պարունակող ծրարների բացման մասին,
4. Գնման ընթացակարգի գնային առաջարկ պարունակող ծրարների բացման մասին,
5. Գնահատման մասին,
6. Հարցում կատարելու մասին,
7. Գնման ընթացակարգի հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի (տեղեկությունների) ներկայացման մասին,
8. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝0***

**2.ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ-18/13 ծածկագրով հայտերի բացման մասին**
**(Դ. Դաբաղյան)**

1. Սահմանված ժամկետում, սահմանված կարգով հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| | |
|---|---|
| 1 | «Էյչ Գրուպ» ՍՊԸ |
| 2 | «ԲՐԻԴՋ» ՍՊԸ |
| 3 | «Տիգման Գրուպ» ՍՊԸ |
| 4 | «Յունիմայն» ՍՊԸ |

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝0***

**3.Գնման ընթացակարգի հայտեր պարունակող ծրարների բացման մասին**
**(Դ. Դաբաղյան)**

Մասնակիցների կողմից ներկայացված փաթեթներում Հրավերով սահմանված փաստաթղթերը առկա են:

Մասնակիցներիի կողմից ներկայացված փաթեթներում փաստաթղթերը կազմված են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ բացառությամբ «ԲՐԻԴՋ» ՍՊԸ-ի Հավելված 1-ի՝ (էլեկտրոնային համակարգ (ARMEPS) ներբեռնված ֆայլը վնասված է, հնարավոր չէ վերբեռնել):

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝0***

**4.<u>Անհամապատասխանությունները շտկելու մասին</u>**

**(Դ. Դաբաղյան)**

Քանի որ հայտերի գնահատման արդյունքում արձանագրվել են անհամապատասխանություններ ուստի հանձնաժողովը որոշեց.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 41-րդ կետի համաձայն վերը նշված անհամապատասխանությունների մասին ծանուցել՝ «ԲՐԻԴՋ» ՍՊԸ-ին՝ հայտը շտկելու նպատակով, որը պետք է ներկայացնի իր շտկումները էլեկտրոնային եղանակով՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով, մինչև 30.07.2018թ. 15:00 ներառյալ:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝0***

**5.<u>Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին</u>**

**(Դ. Դաբաղյան)**

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ-18/13 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով գնման ընթացակարգի գնահատման համար «ԲՐԻԴՋ» ՍՊԸ-ի հայտում արձանագրված անհամապատասխանությունները շտկելու նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել 2018 թվականի հուլիսի 30-ին, ժամը 15:00-ին՝ ք. Երևան, Գ. Հովսեփյան 26 հասցեում:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝0:***

Հանձնաժողովի.

| | |
|---|---|
| նախագահ՝ | Դ. Դաբաղյան |
| բացող անդամներ՝ | Ս. Մկրտչյան |
| | Ս. Շահմուրադյան |
| գնահատող անդամներ՝ | Ա. Հակոբյան |
| | Հ. Ղազարյան |
| քարտուղար՝ | Հ. Նավասարդյան |